ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1961 Общественные науки

Նաիրոյե Խուդո

ՔՐԴԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ ԵՎ «ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԸ» ԱՆԳԼԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԵՋ

Հայտնի է, որ պատմական Քուրդիստանը մասնատված է հիմնականում Իրանի, Թուրքիայի և Իրաքի միջև։ Քուրդ ժողովուրդը Թուրքիայում, Իրանում և Իրաքում շարունակ ենթարկվել է ազգային հալածանքի և ճնշման, ոտնահարվել են նրա ազգային իրավունքները։ Քրդերի իրավազուրկ վիճակը ցույց տալու համար բավական է հիշատակել Թուրքիայի նախկին պրեզիդենտ Իսմետ Ինենյուի հայտարարությունը 1930 թ.։ որը, որոշ վերապահումով, բնորոշ է եղել նաև Իրանի և Իրաքի քրդերի համար։ Նա ասում էր. «Միայն թուրքական ազգն իրավունք ունի պահանջներ ներկայացնել էթնիկական և ռասսայական իրավունքների համար մեր երկրում։ Ուրիշ ոչ մի տարր այդ բանի իրավունքը չունի»[1]։ Թուրքիայի այդ ժամանակվա արդարադատության մինիստր Մահմուդ Էսպադ բեյը հայտարարում էր. «Թուրքը միակ պարոնն է, մեր երկրի միակ տերը։ Մարդիկ, որոնք իրենց ծագումով չեն հանդիսանում մաքուր թուրքեր, մեր երկրում ունեն մեկ իրավունք՝ լինել ստրուկներ, ծառաներ։ Եվ թող այս ճշմարտությունն իմանան և բարեկամները և թշնամիները։ Թող այն իմանան նույնիսկ սարերը»[2]։

Քուրդիստանի մասնատվածությունը և երեք պետությունների կազմի մեջ մտնելը առաջ է բերել ամբողջական Քուրդիստանի տարբեր մասերի պայմանական անուններ—Թուրքական Քուրդիստան, Իրանական Քուրդիստան և Իրաքյան Քուրդիստան[3]։

Իրաքի Քուրդիստանն ընկած է Իրաքի հյուսիսային մասում և աչքի է ընկնում իր բարեխառն կլիմայով։ Բնակչությունը վարում է նստակյաց կյանք և մի աննշան մասն է, որ վարում է քոչվորական կամ կիսաքոչվորական կյանք[4]։ Գյուղատնտեսության տեսակետից Քուրդիստանը աչքի է ընկնում առավելապես չոռոգվող ցանքատարածություններով։ Չնայած դրան, Իրաքի Քուրդիստանը համարվում է երկրի հացի արտադրության հիմնական կենտրոնը։ Մշակվում են նաև տեխնիկական կուլտուրաներ՝ բամբակ, ծխախոտ, կաուչուկ և այլն։

---

[1] „Miliyet", 1930, a. 30 (*տես* А. Шамзини, „Курды", стр. 64).

[2] *Նույն տեղում։*

[3] *Քրդերի նկատմամբ թուրքական կառավարության վարած քաղաքականության մասին տե՛ս* Nuri Dersimi, „Kurdistan tarihinde Dersim", Alep, 1952.

[4] *Որ Իրաքի քրդերի մեջ քոչվորները ոչ մեծ թիվ են կազմում, վկայում են հետևյալ տվյալները. համաձայն 1947 թ. մարդահամարի տվյալների, որոնք բերված են անգլիացի հեղինակ Դ. Ուորիների կողմից, Իրաքի ամբողջ գյուղական բնակչության թվի մեջ քոչվորների թիվը հասնում էր մոտավորապես 250 հազար մարդու։ Այնուհետև, եթե հաշվի առնենք, որ արաբական ցեղերից միայն Շամմար ցեղը բաղկացած է մոտ 100 հազար մարդուց, ապա պարզ կլինի, որ քոչվորական կյանքով զբաղվում է քրդերի աննշան մասը։ «Տե՛ս* Д. Уоринер, «Земельные реформы в странах Ближнего Востока». М., 1958 г., стр. 1851.

Արդյունաբերության տեսակետից Իրաքը հատկապես աչքի է ընկնում նավթի հանույթով. նավթարդյունաբերական կենտրոնները գտնվում են Քուրդիստանում և այդ բնագավառում աշխատող բանվորների զգալի մասը քրդեր են։

Իրաքի Քուրդիստանի քաղաքներից նշանավոր են Մոսուլը, Կիրկուկը, Սուլեյմանին, Էրբիլը, Ռևանդուզը, Զախոն, Աքրան և այլն։

Գերմանիայի և նրա դաշնակից Թուրքիայի պարտությունը առաջին Համաշխարհային պատերազմում հասցրին թուրքական իմպերիայի քայքայմանը։ 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսյան հաշտությունից անմիջապես հետո, անգլիական զորքերը խախտեցին հաշտության պայմանները և օկուպացրին Մոսուլի նավթային շրջանը։ Անգլիական իմպերիալիզմի համար դրանով իսկ ստեղծվեց նավթային հարստություններին տիրանալու հնարավորություն, ինչպես նաև ստրատեգիական կարևոր դիրքի ապահովում Մերձավոր Արևելքում։ Անդրադառնալով անգլիական իմպերիալիզմի զավթողական պլաններին, Լենինը այդ ժամանակ գրում էր. «Անգլիական կապիտալիստները... թալանեցին բոլոր գերմանական գաղութները Աֆրիկայում, թալանեցին Մեսոպոտամիան և Պաղեստինը, խեղդեցին Հունաստանը և սկսեցին թալանել Ռուսաստանը»[7]։

Իրաքում քրդական շարժումների առաջացման պատճառները հասկանալու համար անհրաժեշտ է համառոտակի ցույց տալ նախ իրաքյան Քուրդիստանի գյուղատնտեսության և գյուղացիների վիճակը։ Գյուղատնտեսության մեջ մեծ դեր էին խաղում ֆեոդալական կարգերը[8], երբ մի կողմից ականատես ենք լինում հողային խոշոր սեփականատիրությանը, մյուս կողմից հողազուրկ աղքատ գյուղացիական մասսաներին, գյուղատնտեսական արտադրամիջոցների ցածր մակարդակին։ «Իրաքի գյուղական հասարակության վերլուծությունը,— գրում է Ջաֆար Հայաթը,—համեմատած ուրիշ երկրների դրության հետ, ցույց է տալիս, որ իրաքյան գյուղերի սոցիալական կարգերում մինչև այժմ դեռևս պահպանվում են նախնադարյան հողագործական համայնքի տարրեր, ֆեոդալական կարգերի տիրապետությամբ հանդերձ, որոնք իհարկե, հանդիսանում են ցեղային կարգերից անցում դեպի նոր աստիճան, որը մի շարք շրջաններում սկսել է քայքայվել քաղաքակրթության և ժամանակակից տնտեսական հարաբերությունների ազդեցության տակ։ Գյուղացիների ճնշող մեծամասնությունը ապրում է կարիքի և տառապանքների մեջ, այն ժամանակ, երբ ավագների դասակարգը և քաղաքի ազդեցիկ դեմքերը, նոր կալվածատերերի դասակարգը ապրում են լիության մեջ...»[9]։

Իրաքի գյուղատնտեսությունը զրկված է եղել տեխնիկան լայնորեն օգտագործելու հնարավորությունից։ Այդ մասին վկայում են, օրինակ, հետևյալ տվ-

---

5 П. Демченко, «В горах Курдистана», Современный Восток», 1960, № 1, стр. 35.

6 Քուրդիստանի օկուպացման մասին Անգլիայի կողմից, տես Longrigg, „Iraq 1900 to 1950", London, 1956, 118 p.

7 Ленин, Соч. т. IV, изд. том 28, стр. 45.

8 Իրաքյան Քուրդիստանի սոցիալ-տնտեսական դրության մանրամասն նկարագիրը տրված է իրաքցի արար հեղինակ Շաքիր Խասրակի «Քուրդիստան և քրդական հարց» գրքում։ Նրա մասին գրախոսությունը տե՛ս «Проблемы востоковедения», № 196։

9 Дж. Хайят, «Иракская деревня», М., 1953, стр. 54.

յալները։ 1945 թվականից մինչև 1952 թիվը ընկած ժամանակաշրջանում գյուղատնտեսության մեջ օգտագործելու համար գնվել են հետևյալ քանակով գյուղատնտեսական մեքենաներ[10]։

Ըստ տարիների	Տրակտորներ	Ցոփեր	Կուլտիվատորներ	Կոմբայններ
1945	134	115	31	12
1946	69	40	65	30
1947	94	110	8	35
1948	84	65	36	53
1949	73	119	39	87
1950	167	146	46	98
1951	54	78	43	98
1952	105	74	45	96

Գյուղացու չնչին եկամուտները չէին բավարարում ընտանիքի ամենատարրական կարիքները։ «Իրաքի բնակիչների թշվառ գոյությունը հանգիսանում է ամենասարսափելի և կործանարար չարիք։ Իր խղճուկ եկամտի 70 տոկոսը Իրաքի գյուղացին ծախսում է սննդի վրա, սակայն սա ևս նրան չի փրկում սովից։ Մնացած 30 տոկոսը նա պետք է ծախսի հագուստի, բնակարանի և մյուս կենսական անհրաժեշտ կարիքների վրա»[11]։

Կյանքի կենսամակարդակի և սոցիալ-տնտեսական այլ պայմանների տեսակետից հյուսիսային Իրաքի՝ Քուրդիստանի և Իրաքի հարավի միջև կա որոշ տարբերություն, որի մասին կխոսենք ստորև, սակայն, ընդհանուր պատկերը և այստեղ և այնտեղ մեկ է։ Իրաքյան գյուղը իրենից ներկայացնում է անցյալի հետամնացության, աղքատության մի պատկեր։ Հատ ու կենտ բարեշեն, ժամանակակից ոճով կառուցված շենքեր, որտեղ ապրում են խոշոր սեփականատերերը և աղքատիկ տեսք ունեցող գեղջկական խրճիթների հսկայական մասսա։ «Այգպիսին է մինչև անհավատալիության աստիճանի դաժան իրադրությունը, որի մեջ ընթանում է ֆելլահի կյանքը օրորոցից մինչև գերեզման, այդ նույն փայտաշեն օրորոցից, որի մեջ երեխան քնում է պատի ստվերի տակ։ ճանճերի չդադարող բզզոցի տակ և այսպես մինչև գերեզման... Այսպես է ընթանում կյանքը Մերձավոր Արևելքի բոլոր հարթավայրերի վրա, սկսած Տրանսիորդանիայի ծայրամասերից մինչև Քուրդիստանի լեռնաստորոտը»[12]։

Քուրդիստանի գյուղացիության դրությունը վատանում է նրանով, որ այնտեղի ցանքատարածությունների բացարձակ մեծամասնությունը չոռոգվող ցանքատարածություններ են և բերքատվությունը այսպիսով կախված է տեղումներից։

Իրաքյան Քուրդիստանում հողագործության սիստեմը որոշ չափով տարբերվում է Իրաքի հարավային մասում գոյություն ունեցող հողագործության սիստեմից։ Քուրդիստանում գոյություն ունեցող ժառանգության մասին օրենքը համապատասխանում էր ժառանգորդների միջև հողը հավասարապես բաժանելու այն պրակտիկային, որի մասին հատուկ օրենք կար դեռևս Օսմանյան կայսրության հողային օրենսգրքի մեջ։ Այսպիսով, այդ կարգը հասցնում էր խոշոր հողատիրության աստիճանական մանրատման։ Մինչդեռ հարավում

[10] Government of Iraq. statistical abstract 1952, Zahra Press Baghdad, 1954, p. 222.

[11] Дж. Хайят, «Иракская деревня», стр. 55.

[12] Ж. Велерс, «Крестьяне Сирии и Ливана», М., 1952, стр. 154.

ցեղային սովորույթը, որն ամրապնդված էր շարիաթով, նախատեսում էր, որ միակ ժառանգորդը պետք է լինի մեծ որդին, մի բան, որը նպաստում էր խոշոր հողատիրության պահպանմանը[13]։

Նույնիսկ խոշորադույն հողային տիրությունները Քուրդիստանում մեծ չեն, եթե այն համեմատելու լինենք հարավի կալվածքների հետ։ «Մուսուլի մի խոշորագույն հողային սեփականատեր,—գրում է Դ. Ուորիները,—ունի 20 գյուղ, որը տարածությամբ մոտավորապես համապատասխանում է 20 հազար դոնում[14] հողի. երկրի հարավային մասում նրա տիրույթը չէր համարվի շատ խոշոր»[15]։ Իրաքյան Քուրդիստանի մանր հողատիրության մասին են խոսում նաև Ջաֆար Հայաթի կողմից բերված տվյալները, ըստ որի Կիրկուկ և Էրբիլ գավառների հողի մոտ 75 տոկոսը գտնվում է մանր սեփականատերերի ձեռքում։ «Կիրկուկ և Էրբիլ գավառների հարթավայրերում հողի մոտ 75 տոկոսը գտնվում է այն գյուղացիների ձեռքում, որոնց հողատարածությունների չափը չի անցնում 200 մուշարից»[16]։ (Մուշարը հավասար է 1/4 հեկտարի—Ն. Խ.)։ Գուցե որոշ չափազանցություն լինի հիշյալ տոկոսի մեջ, սակայն, մի բան անվիճելի է, որ իրոք, հարավի համեմատությամբ իրաքյան Քուրդիստանում խոշոր հողատերերի թիվը քիչ է։ Իսկ ինչ վերաբերվում է այն «միջին գյուղացիներին», որոնց մասին խոսում է Ջ. Հայաթը, ապա դրանց զգալի մասը կուլակային տնտեսություններ են, որոնք օգտագործում են հողազուրկ գյուղացի-բատրակների աշխատանքը, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրության մեջ ներդնում մեքենաներ։ Այդ «միջին» թվերի ետևում թաքնված է գյուղացիական տնտեսությունների իսկական պատկերը։ Բանն այն է, որ Հայաթի կողմից նշված 75 տոկոսի մեջ էլ հողը խիստ անհավասարաչափ է բաժանված։ Այնուհետև, Քուրդիստանի գյուղացիության մի հսկայական մասը, չնայած ձևականորեն (ինչպես այդ նշվել է վիճակագրական տարբեր փաստաթղթերում) համարվում է հողային սեփականատեր, իրականում ստանում է հողից ստացվող եկամտի չնչին մասը, որովհետև երբեմն միայն բերքի փոքր մասն է մնում նրան։ Իսկ վաշխառուն, որից տնտեսական ծանր դրության մեջ գտնվող գյուղացին վերցնում է դրամ և այլևս չի կարողանում այն վերադարձնել, իր դրամի և նրա տոկոսների փոխարեն վերցնում է բնամթերք։ Կարևոր է նշել ևս մեկ հանգամանք. նույն չափի հողատարածություն ունեցող գյուղացիական տնտեսությունների դրության մեջ կա տարբերություն՝ կապված հողատարածության պիտանիության հետ։ Ոռոգման ցանցի անբավարար վիճակի և հողի մշակության այլ միջոցների բացակայության հետևանքով բավական մեծ հողատարածություններ փաստորեն չեն մշակվում, իսկ գյուղացիները մնում են հողազուրկ։ Ըստ Ջ. Հայաթի բերած տվյալների, Կիրկուկի և Էրբիլի գավառներում բնակչության 17 տոկոսն է տիրում մշակման համար պիտանի հողատարածություններին[17]։ Գյուղացիությունը գնալով բաժանվում էր դասակարգային տարբեր խմբերի։ Եվ չնայած բերվող վիճակագրական տվյալների, որոնք այսպես կոչված «միջին» թվերով են ներկայացնում գյու-

---

[13] Д. Уоринер. «Земельные реформы в странах Ближнего Востока», М., 1958, стр. 210.

[14] Մեկ դոնումը=1/4 հեկտարի։

[15] Д. Уоринер... նույն տեղում, էջ 211։

[16] Дж. Хайят... նույն տեղում, էջ 36։

[17] Дж. Хайят... նույն տեղում, էջ 67։

զական հասարակայնության պատկերը, Իրաքյան Քուրդիստանի գյուղում, չհաշ-ված խոշոր հողատերերին, գյուղացիությունը բաղկացած էր տնտեսությունը նոր հիմունքներով վարող կուլակային խավից և չքավոր հողազուրկ գյուղացիու-թյունից։ Հյուսիսային Իրաքի (Քուրդիստանի) մշակվող հողատարածություն-ների արդյունավետությունը մեծապես կախված էր այն բանից, թե ինչպես էր այն մշակվում, որոնք էին մշակման միջոցները։ «Հյուսիսում հացահատիկա-յին կուլտուրաների բերքատվությունը շատ անկայուն է, որպեսզի գյուղա-տնտեսության մեջ կարողանար տեղի ունենալ կապիտալի ինչ որ կուտակում, և հողին տիրանալը դարձավ քաղաքային վաճառականի գործը, որը դրամա-կան վարկեր էր տալիս հարևան գյուղերի գյուղացիներին»[18]։ Գյուղում չապ-րող, բայց հող ձեռք բերած սեփականատերերը տնտեսությունը վարում էին ավելի առաջադիմական եղանակներով։ Մոսուլի շրջանի հողատերերը գնալով ավելի ու ավելի շատ էին կապիտալներ ներդնում հողագործության մեջ, քան հարավի շեյխերը։ «Վերջին տարիներին մեքենաների օգտագործման շնորհիվ նրանք զգալի չափով ընդլայնեցին մշակվող տարածությունները, ինչպես նաև մտցրին նասոսային ոռոգում»[19]։ Տարբեր աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չքավոր-ընչազուրկ գյուղացիների հեռանալը գյուղերից, փաստորեն ստեղծել էր աշխատուժի հայթայթման պրոբլեմ։ «Մի կալվածա-տեր էրբիլում հայտարարել է,—գրում է Ուորիները,—որ հողատերերը ստիպ-ված կլինեն օգտագործել տրակտորներ և կոմբայններ, չնայած այն բանին, որ մինչև այժմ նրանք կրում էին պահեստամասեր հայթայթելու և վերանորոգման դժվարությունը, քանի որ մի տարվա ընթացքում գյուղական վայրերում բոլո-րովին չի մնալու ազատ բանվորական ուժ»[20]։

Խոսելով գյուղից դեպի քաղաքներ գնացող գյուղացիական մասսաների վերա-բնակեցման պատճառների մասին, Ջաֆար Հայաթը գրում էր. «Սրա պատ-ճառները շատ են։ Առաջին հերթին ձգտումը իր տնտեսական ծանր դրությունից դուրս գալու համար... Ամբողջ աշխարհի առևտրական և տնտեսական զարգա-ցումը իր հետքն է թողել նաև Իրաքի գյուղատնտեսական արտադրության վրա, որը նահապետականից դարձել է ապրանքային։ Ավազանին, աղաները, կալ-վածատերերը, քաղաքի ազդեցիկ դեմքերը և առևտրականները, որոնք ծարավի են տիրանալու հողային մեծ տարածություններին, ցեղային կարգերի քայքա-յումից հետո Իրաքի շրջանների մեծ մասում գրավեցին ցեղերին պատկանող հողերը և ավելի քչացրին գյուղացու առանց այն էլ չնչին եկամուտը, վերջինիս թողնելով իր իսկ ձեռքով ցանված բերքի ոչ մեծ բաժինը»[21]։ Իրաքի, հատկա-պես Քուրդիստանի գյուղատնտեսության մեջ սկսեց համեմատաբար մեծանալ մեքենայական աշխատանքների ծավալը։ Այդ մասին են վկայում 1952—1953 թվականների գյուղատնտեսական մարդահամարի տվյալները։ Ըստ այդ մար-դահամարի տվյալների, Իրաքում այդ ժամանակ հաշվվում էր 2091 տրակտոր, որոնց մեծ մասը օգտագործվում էր գյուղատնտեսական աշխատանքների մեջ երկրի հյուսիսում, որտեղ նա «օգտագործվում է այն վաճառական-կալվածա-տերերի տնտեսությունների մեջ, որոնք վաղուց հիմնվել են հողի վրա և որոնք

18 Д. Уоринер... Նույն տեղում, էջ 180։
19 Նույն տեղում, էջ 211։
20 Նույն տեղում, էջ 203։
21 Дж. Хайят... Նույն տեղում, էջ 61։

ապրում են Մոսուլում, Էրբիլում և հյուսիսային այլ քաղաքներում»[22]։ Իրաքի կառավարությունը երբեմն փոխառություններ էր բաց թողնում գյուղատնտեսության ֆինանսավորման համար։ Ինչպես ցույց են տալիս ստորև բերված տվյալները, այդ փոխառություններից կարող էին օգտվել միայն կալվածատերերը և հիմնականում գյուղատնտեսությունը բուրժուական եղանակով վարող հարուստ տնտեսատերերը։ Այսպես, 1946 թ. ֆինանսական տարում փոխատվություն բաց թողնվեց 255.222 դինար գումարի չափով։ Այդ փոխատվությունները ստացող մարդկանց թիվը կազմեց 725 հոգի։ Ջաֆար Հայաթի բերած տվյալներից երևում է, որ փոխատվության միջին դումարը յուրաքանչյուր ստացողին կազմել է 250—300 դինար։ Իրաքյան գյուղացու եկամտի հետ ծանոթանալը մեզ հիմք է տալիս այն եզրակացության գալու, որ նա փաստորեն ի վիճակի չէր օգտվելու այդ փոխատվությունից, քանի որ նրա տարեկան եկամուտը մի քանի անգամ ավելի ցածր էր, քան փոխատվության միջին չափը։

Հետպատերազմյան տարիներին Իրաքի (այդ թվում և Քուրդիստանի) գյուղատնտեսության մեջ զգալի տեղաշարժ տեղի ունեցավ։ Քուրդիստանում տեղի ունեցավ հացահատիկային կուլտուրաների արտադրության աճ. այդ աճի մեծ մասը տեղի ունեցավ մասամբ էլ մեքենայական աշխատանքների գործադրման շնորհիվ։ Մոսուլի և Կիրկուկի գավառներում, օրինակ, ցորենի արտադրությունը կրկնապատկվեց և կազմեց ամբողջ Իրաքի ցորենի արտադրության 70 տոկոսը։ Սակայն, ինչպես վերը մենք տեսանք, գյուղատնտեսական արտադրության ավելացումը ոչնչով չէր թեթևացնում գյուղացու աղքատիկ դրությունը։ Նա հիմնականում հանվում էր շուկա և ավելի մեծ միջոցներ տալիս սեփականատիրոջը՝ շահույթներ ձեռք բերելու համար, իսկ գյուղացիները իրենց եկամուտներով հազիվ պահպանում են իրենց գոյությունը։ Կապիտալիստական հարաբերությունների ներթափանցումը գյուղ ոչ միայն չէր թեթևացնում գյուղացիների դրությունը, այլև շատ բանով ավելի վատթարացնում էր այն։ Այստեղ տեղին է հիշատակել Մարքսի խոսքերը, որոնք բերված են Լենինի կողմից ռուսական նախառևոլյուցիոն գյուղացիության մասին, որ նրանք «տառապում են և կապիտալիզմից և կապիտալիզմի ոչ բավականաչափ զարգացումից»[23]։ Ինչպես Իրաքի միջին և հարավային, այնպես էլ հյուսիսային շրջանների գյուղացիները մեծապես շահագործման էին ենթարկվում վաշխառուների կողմից։ Պարտքով վերցնելով սերմացուն ցանելու համար, հաց, պարենային ապրանքներ և դրամ (մեծ տոկոսներով) հետո նրանք դժվարությամբ էին դրա տակից դուրս գալիս. նրանց վճարած տոկոսները երբեմն տարեկան հասնում էին 100—200-ի։ Վաշխառուները գյուղացիներին խեղդում էին իրենց պարտքերով, նրանց վերածում պարտքատիրոջ ստրուկների, որը շատ դեպքերում անցնում էր նաև նրանց ժառանգների վրա։ Մեծ չափերի էր հասնում հողը վարձակալությամբ տալու պրակտիկան։ Գյուղացու բաժին ստացվող բերքից կախված էր սահմանված տրադիցիաներից և հողատիրոջ ու գյուղացու միջև գոյություն ունեցող փոխհարաբերություններից։ Այն տարբեր էր Իրաքի տարբեր շրջաններում։ Ամբողջ բերքը բաժանվում էր հողատիրոջ և արենգատորի միջև։ Քուրդիստանում, օրինակ, հողի տերը վերցնում էր բերքի մոտավորապես կեսը։ «Իսկ հարավում բերքի բաժանումը գյուղացու և հողատիրոջ

---

22 Д. Уоринер... *նույն տեղում, էջ 181։*

23 К. Маркс, «Капитал», т. 1, М., 1949, стр. 7.

միջև տարբեր է, այն կախված է հողի որակից, տիրապետության ձևից, գյուղացուն սերմերով ապահովելուց, քաշող ուժից և արհեստական ոռոգման բնույթից»[24]։

Իրաքի հողագործության մեջ ներհոսում էր նաև օտարերկրյա կապիտալը (գլխավորապես անգլիականը)։ Հաճախ անգլիական չինովնիկները, որոնք աշխատում էին Իրաքում և ստանում բարձր աշխատավարձ, իրենց համար շահավետ էին համարում գնել հողեր և շահագործել Իրաքի գյուղացիների աշխատանքը նույնպիսի դաժան պայմաններով, որով նրանց շահագործում էին տեղական կալվածատերերը։ 1921 թ. մինչև 1928 թ. (պաշտոնական տվյալներով) օտարերկրացիների կողմից Իրաքում գնվել էր 2.166 հողակտորներ[25]։ Այդ պրոցեսը շարունակվեց նաև հետագայում։

Ժողովրդական մասսաների դաժան շահագործումը և ազգային հալածանքը հասցնում էին դասակարգային պայքարի սրման և այդ պայքարի մեջ հիմնական դերը խաղում էր գյուղացիությունը, իսկ վերջինս մեծապես շահագրգրված էր ագրարային հարցի լուծմամբ։

Ելույթ ունենալով «թագավորական կայսերական ընկերությունում» 1933 թ. փետրվարի 15-ին, Անգլիայի նախկին գերագույն կոմիսարը Իրաքում՝ Հենրի Դոբսը հայտարարում էր. «Մեզ չհաջողվեց լուծել հողատիրության պրոբլեմը... Ամեն րոպե կարող է բռնկվել ագրարային ռևոլյուցիան, որի հետ հնարավոր է, իրաքյան բանակը ի վիճակի չի լինելու հաշիվ տեսնել։ Ես կասկածում եմ, որ պետության և քաղաքային հողատերերի գույքային շահերը թույլ տային գնալ դեպի ագրարային պրոբլեմի արդարացի (?!) լուծման... Ասորիների մեջ դժգոհություն է տիրում... Մյուս կողմից քրդական հարցը համարյա անլուծելի է մնացել... Եթե քրդերի պահանջները այս կամ այն կերպ չբավարարվեն, քրդերի ապստամբությունը կդառնա անխուսափելի...»[26]։ Սոցիալական այս չլուծված պրոբլեմները հանդիսանում էին հիմնական պատճառը Քուրդիստանում տիրող այն անհանգիստ դրության, որը գոյություն է ունեցել միշտ։

Անգլիական իմպերիալիզմը ճարպկորեն օգտագործում էր քրդական հարցը, ինչպես Իրաքի, այնպես էլ Իրանի և Թուրքիայի կառավարությունների քաղաքականության վրա իր ազդեցությունն ուժեղացնելու համար։ Իրաքի կազմի մեջ մտած Մոսուլը դարձավ Մերձավոր Արևելքում Անգլիայի այսպես կոչված «քրդական քաղաքականության» կենտրոնը, որը հնարավորություն էր տալիս նրան ճնշում գործադրել հիշյալ պետությունների կառավարությունների վրա. ընդ որում ամենից շատ նրա կողմից օգտագործվում էր «Քրդական անկախ պետություն» ստեղծելու խրտվիլակը։

1920 թ. Թուրքիայի և առաջին համաշխարհային պատերազմում հաղթած դաշնակից տերությունների միջև կնքվեց Սևրյան հաշտության պայմանագիրը, որի ակտիվ մասնակիցն էր Անգլիան։ Այդ պայմանագրի 3-րդ բաժնի («Քուրդիստան») 62-րդ և 64-րդ հոդվածները ամբողջապես վերաբերում էին Քուրդիստանին։ 62-րդ հոդվածում ասվում էր.

«Հանձնաժողովը ունենալով իր նստավայրը Կոստանդինապոլսում և կազմված լինելով երեք անդամներից, նշանակված ըստ պատկանելության

[24] Дж. Хайят, ... стр. 37.
[25] Сулейман и К. Н. Смирнов, «Ирак», Тбилиси, 1934, стр. 50.
[26] Նույն տեղում, стр. 79.

բրիտանական, ֆրանսիական և իտալական կառավարությունների կողմից, սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց վեց ամիսների ընթացքում կնախապատրաստի ավտոնոմիա այն մարզերի համար, որտեղ գերակշռում է քրդական տարրը և որոնք ընկած են Եփրատից արևելք, Հայաստանի հարավային սահմաններից հարավ, ինչպես այն կարող է որոշվել հետագայում և Թուրքիայի սահմաններից հյուսիս Սիրիայի և Մեսոպոտամիայի հետ միասին համապատասխան այն նկարագրի, որ տրված է 27-րդ հոդվածի II 2°-ում և 3°-ում։

Այս կամ այն հարցի վերաբերյալ միահամուռ համաձայնության բացակայության դեպքում այս վերջինը (այսինքն հարցը—ծանոթ. Շ. Մ.) հանձնաժողովի անդամների կողմից կտրվի իրենց կառավարություններին։ Այդ պլանը պետք է իր մեջ պարունակի այդ մարզերի մեջ գտնվող ասորա-խալդեյական և այլ էթնիկական կամ կրոնական փոքրամասնությունների պաշտպանության երաշխիքը և այդ նպատակով հանձնաժողովը, որը կազմված կլինի բրիտանական, ֆրանսիական, իտալական, պարսկական և քրդական ներկայացուցիչներից, կայցելի տեղերը, որպեսզի քննարկի և որոշի, թե ինչպիսի ուղղումներ, անհրաժեշտության դեպքում, պետք է կատարվեն Թուրքիայի սահմանի վրա, այնտեղ, որտեղ սույն պայմանագրի որոշմամբ, այդ սահմանը առնչվում է Պարսկաստանի սահմանի հետ»[27]։ Հետաքրքիր է նաև հիշյալ պայմանագրի 64-րդ հոդվածը, որը նույնպես լի է քրդական ազգային-ազատագրական շարժման մասնակիցներին տրվող խոստումներով։ Այնտեղ ասվում էր. «Եթե սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում 62-րդ հոդվածի մեջ նշված մարզերի քուրդ բնակչությունը դիմի Ազգերի լիգայի խորհրդին, նշելով. որ այդ մարզերում բնակչության մեծամասնությունը ցանկանում է անկախ լինել Թուրքիայից, եթե խորհուրդը այդ ժամանակ գտնի, որ այդ բնակչությունը ընդունակ է այդ անկախության և եթե նա առաջարկի այն տալ սրան, Թուրքիան այսուհետև պարտավորվում է համաձայնվել այս առաջարկության հետ և հրաժարվել բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից այդ մարգերում։

Այդ հրաժարման մանրամասնությունները կդառնան հատուկ կոնվենցիայի առարկա գլխավոր դաշնակից երկրների և Թուրքիայի միջև։

Եթե հիշատակված հրաժարումը տեղի ունենա, գլխավոր դաշնակից պետությունների կողմից ոչ մի առարկություն առաջ չի քաշվի այդ անկախ քրդական պետությանը այն քրդերի միանալու դեմ, որոնք ապրում են Քուրդիստանի այն մասում, որը մինչև ներկա պահը մտնում է Մոսուլի վիլայեթի մեջ»[28]։

Քրդական ազատագրական շարժման ներկայացուցիչները մեծ հույսեր էին կապում այս պայմանագրի հետ. սակայն շուտով Թուրքիայի քեմալական կառավարությունը, արևմտյան իմպերիալիստական տերությունների թողտրվությամբ, ոչնչի հավասարեցրեց ազգային փոքրամասնություններին տրված խոստումները, որոնք փաստորեն օրինականացվեցին Լոզաննայի պայմանագրով[29]։ Օսմանյան կայսրության կազմից դուրս եկած Իրաքի կառավարու-

---

[27] «Севрский мирный договор и акты подписанные в Лозанне», Под. ред. Ключникова и Собонина, М., 1927, стр. 24.

[28] Севрский мирный договор.. стр. 25.

[29] Նույն տեղում։

թյունը, անգլիական կառավարության հավանությամբ, հենց սկզբից ևեթ թշնամական դիրք գրավեց քրդական ազգային ազատագրական շարժման նկատմամբ։ Իրաքի օկուպացումից հետո ամբողջ երկրով մեկ շարունակվեց շարժումը նոր տիրապետության՝ անգլիական տիրապետության դեմ։ 1919 թ. Բարզինջանի քրդերը շեյխ Մահմուդի գլխավորությամբ պատերազմական ակտիվ գործողություններ են ծավալում անգլիական զորքերի դեմ։ Բարզինջանի քրդերի շարժմանը միանում են նաև այլ շրջանների քրդական ջոկատներ. շարժումը իրենից ներկայացնում էր բավական մեծ ուժ. նրա մասնակիցները գերի են վերցնում անգլիացի գնդապետ Գրենհաուզին և անգլիացիներին վտարում Սուլեյմանիից. նույն տարվա հունիսին անգլիական զորքերը, գեներալ Ֆրեյզերի հրամանատարությամբ, դուրս եկան շեյխ Մահմուդի զորքերի դեմ, որոնք տեղավորված էին Դերբենդե Բազիյան ձորում։ Տեղի ունեցած ճակատամարտում շեյխ Մահմուդը վիրավորվեց և գերի վերցվեց։ Անգլիացիները վերականգնեցին իրենց իշխանությունը Սուլեյմանիում։ Երկու ամսվա համառ պայքարից հետո անգլիական զինված ուժերին հաջողվեց «հանգստացնել» ապստամբներին։

1921 թ. քրդական շրջանների բնակչությունը վճռականորեն շարունակում էր պայքարը իր ազգային իրավունքների ճանաչման համար։ Իրաքի քուրդ բնակչության պատկառելի մասը հրաժարվեց անգլիական իմպերիալիստների կողմից կազմակերպված՝ Ֆեյսալին թագավոր ընտրելու հանրաքվեից։ Չնայած դրան, անգլիական իմպերիալիստները հայտարարեցին, որ ընտրողների 97 տոկոսը քվեարկել է Ֆեյսալին թագավոր ընտրելու օգտին։

1922 թ. ազատված շեյխ Մահմուդը նորից վերադառնում է Սուլեյմանի։ Տեսնելով բնակչության խիստ դժգոհությունը, նա նպաստավոր է համարում ապստամբություն հայտարարել։ Սուլեյմանին հայտարարվում է քրդական ավտոնոմ մարզ, իսկ շեյխ Մահմուդը՝ նրա կառավարող։ Ստեղծվում է քրդական ազգային բանակ, կազմակերպվում է քրդերեն լեզվով գրքերի և թերթերի հրատարակման գործը։ Սկզբնական շրջանում անգլիական կառավարությունը, կարծես, դրականորեն էր վերաբերվում շեյխ Մահմուդի գործունեությանը՝ նպատակ ունենալով դրանով իր համար ապահովելու քուրդ բնակչության աջակցությունը՝ Իրաքում կայուն տիրապետություն հաստատելու և երկրի հարստությունները թալանելու համար։ Բացի այդ, Իրաքի կառավարության մեջ այդ ժամանակ օպոզիցիա կար բրիտանական տիրապետության դեմ և այդ հանգամանքը անհանգստացնում էր անգլիական իմպերիալիստներին։ Ահա թե ինչու նրանք որոշեցին օգտագործել քրդական շարժումը իրենց նպատակների համար։ Սակայն անգլիական իմպերիալիստները շուտով փոխեցին իրենց վերաբերմունքը ապստամբության նկատմամբ։ Իրաքի կառավարության կազմից հանելով անգլիական տիրապետության նկատմամբ օպոզիցիայի մեջ գտնվող տարրերին, ինչպես նաև տեսնելով քուրդ բնակչության հակաանգլիական տրամադրությունները, անգլիական կառավարությունը որոշեց լիկվիդացնել քրդական շարժման վտանգը։

1923 թ. անգլիական զինված ուժերը մի շարք գործողությունների են դիմում՝ Սուլեյմանիի քրդական մարզը լիկվիդացնելու համար։ Նրանք սկսում են քաղաքը ենթարկել օդային ռմբակոծության, պահանջելով ապստամբներից անձնատուր լինել։ Շեյխ Մահմուդը և նրա կառավարությունը թողնում են Սու-

լեյմանին և անցնում Իրանի տերիտորիան—Սերդեշտ[30]։ Ոչ մի տեղից օգնություն չկարողանալով ստանալ, շեյխ Մահմուդը Թեհրանում գտնվող բոլոր օտարերկրյա դեսպաններին ուղղված ուղերձում գրում էր.

«Համաշխարհային պատերազմի ժամանակվանից մենք, Հարավային Քուրդիստանի բնակիչներս, անընդհատ անգլիացիներից պահանջում ենք ճանաչել մեր ազգային իրավունքները։ Անգլիական զորքերը ավերում են երկիրը և սպանում են մարդկանց։ Անգլիացիները մեզ հնարավորություն չեն տալիս բարձրացնելու մեր բողոքի ձայնը։ 1922 թ. սկսած անգլիական իշխանություններն իրենց զինված ուժերի օգնությամբ բոլոր ջանքերը գործադրում են, որպեսզի բռնի ուժով Հարավային Քուրդիստանը միացնեն Արաբստանի (Իրաքի) հետ։ Քուրդիստանի բնակչությունը գտնվում է ինքնաթիռների ռմբակոծման և զորքերի հարձակման ճնշման տակ։ Մոտավորապես 200 ընտանիքներ ուժի ճնշման տակ հեռացել ես Սուլեյմանիից։ Թալանվել է հսկայական չափերով ունեցվածք, երկիրը ավերվել է։ Խնդրում ենք արդար վճիռ և ձեր մարդասիրական արդարությունն ընդդեմ այդ ճնշման»։

Չնայած ապստամբների դեմ գործադրվող զինված ուժերի թվական բացահայտ գերակշռությանը, անգլիական իմպերիալիստներին հեշտությամբ չի հաջողվում ընկճել անկախ մարդի բնակչության դիմադրությունը։ Շեյխ Մահմուդը միաժամանակ ձգտում էր սերտ կապեր հաստատել Սովետական կառավարության հետ։ Սովետական կառավարությանն ուղղված նամակում նա գրում էր.

«Ձեզ լավ հայտնի է Իրաքի կառավարության և քրդերի հաշտության մասին, քրդերի ապստամբության մասին, միաժամանակ այն մասին, թե ում դեմ է ուղղված Հարավային Քուրդիստանի ապստամբությունը, ինչպես նաև այս ամենի նկատմամբ հարևան պետությունների վերաբերմունքի մասին։ Իհարկե, դրել Ձեզ մեր բոլոր գործերի մասին, երբ դեռ մենք կապեր չունենք Սովետական կառավարության հետ, որին մենք համարում ենք մեր հենարանը, հնարավորություն չկա... Կարող ենք միայն մի բան ասել. բոլոր քրդերը ռուսներիս համարում են Արևելքի ազատարարներ և պատրաստ են իրենց բախտը կապել նրանց հետ։ Մեզ մտահոգում է հենարանի մասին հարցը։ Հիմնվելով ժողովրդի և նրա ղեկավարների հայտարարությունների վրա, մենք դիմում ենք Սովետական հյուպատոսությանը։ Մեր ժողովուրդը սպասում է մեր և ՍՍՌՄ-ի միջև կապերի ստեղծմանը, և եթե ստեղծվի այն համագործակցությունը, որի մասին ես երազում եմ, այդ դեպքում մեր ժողովուրդը կստանա ազատություն և պարզ է, որ այդ մեծ փաստը և մեր ընդհանուր ծառայությունները ոսկե տառերով կգրվեն պատմության էջերում...»։

Անգլիական նավթային ընկերությունները ևս մեծապես ազդում էին երկրի քաղաքական կյանքի վրա. նրանց շահերը պահանջում էին, որպեսզի Քուրդիստանում մասնավորապես, ստեղծվի բարենպաստ իրավիճակ, երկրի նավթային հարստությունները ազատ կերպով շահագործելու համար։ Խոսելով

[30] S. Longrigg, „Iraq 1900 to 1950", London, 1956, p. 146.

«Իրաք Պետրոլեում կոմպանիի» դերի մասին Իրաքի քաղաքական կյանքում, անգլիացի գիտնական Դ. Ուորինները գրում էր. «Անմտություն կլիներ պնդել, թե «Իրաք պետրոլեում կոմպանին» չի համարվում քաղաքական ուժ»[31]։

Իրաքյան Քուրդիստանը անգլիական իմպերիալիզմի համար բացի իր նավթային հարուստ պաշարներից, ուներ նաև ռազմա-ստրատեգիական նշանակություն։ «Բանը ոչ միայն նրանումն է, որ Մոսուլում գտնվում են նավթի խիստ հարուստ պաշարներ, այլև նրանում, որ բրիտանական պրոտեկտորատը Մեսոպոտամիայի վրա, եթե այն չտարածվի Ռեվանդուզի լեռնաշղթայի շրջանի վրա՝ հյուսիսում, կորցնում է իր ստրատեգիական նշանակությունը»[32]։

Անգլիական կառավարությունը խիստ երկդիմի քաղաքականություն վարեց Մոսուլի հարցում։ Հաշվի առնելով քրդերի դժգոհությունը ինչպես թուրքական կառավարությունից, այնպես էլ Իրաքի նոր կառավարությունից և նրանց անկախության հասնելու ձգտումները, նա իրեն ներկայացնում էր որպես քրդերի անկախության կողմնակից, մյուս կողմից մատնացույց անելով քրդական շարժումները, դրանով իսկ նա ճնշում էր գործադրում հիշյալ կառավարությունների քաղաքականության վրա, արդարացնում, օրինակ, անգլիական զինված ուժերի գտնվելը Իրաքում։ Անգլիական կառավարության այդ քաղաքականության մասին նույն Մայքլ Բրուկսը գրում էր.

«Քրդերի թշնամական վերաբերմունքը Իրաքի նոր կառավարության նկատմամբ որոշ չափով ձեռնատու էր Անգլիային։ Նա հանդիսանում էր հիշեցում Ֆեյսալին և նրա բարեկամներին, որ անգլիական ռազմա-օդային ուժերը միանգամայն անհրաժեշտ էին նրա համար, որպեսզի հպատակության մեջ պահեն լեռնային ազգություններին և որ Անգլիան կարող էր թեքվել դեպի այն բանը, որպեսզի քրդերին անկախություն տրամադրի, եթե Իրաքը չխորհրդակցի բրիտանական կառավարության հետ[33]։ Խոսելով այն մասին, թե ինչպես անգլիական կառավարությունը մտադիր չէր անկախություն տալ քրդերին, Բրուկսը շարունակում է. «Իհարկե, կայսերական դիվանագետները չէին կարող լրջորեն մտածել բնակչությանը ավտոնոմիա տալու մասին այնպիսի կարևոր շրջանում, ինչպիսին Մոսուլն է։ Այդ գաղափարը, սակայն, պետք է ստիպեր մտածելու Իրաքի կենտրոնական կառավարությանը»[34]։ Անգլիական կառավարությունը, այսպիսով, զանազան խաբեությունների և ճկուն քաղաքականության հետ մեկտեղ գործադրում էր զինված ուժերը օգտագործելու պրակտիկան։ «Անգլիացիների պատժիչ ջոկատը դաժան հաշվեհարդար տեսավ ապստամբների հետ»,— իր հիշողությունների մեջ գրում էր Բաղդադում գտնվող անգլիական գերագույն կոմիսարը[35]։ 1919—1920-ական թվականներին քրդական և արաբական շարժումները ճնշելիս անգլիացիները կորցրին 887 զինվոր և սպա, 1128 վիրավոր, իսկ արաբները և քրդերը տվեցին 8500 հոգի սպանված։ Այդ շարժումների ճնշումը բրիտանական իմպերիալիստների վրա նստեց մեկ միլիոն ֆունտ ստեռլինգ»[36]։

---

31 Уоринер, «Земельные реформы...», стр. 257.

32 Майкл Брукс, «Нефть и внешняя политика», М., 1949, стр. 101.

33 Նույն տեղում։

34 Նույն տեղում։

35 «Революционный восток», № 9—10, 1930, стр. 269.

36 Iraq by Philip Willapd Zreland", London, 1937 (ցիտատը բերված է ըստ Դալցիգ „Ирак в прошлом и в настоящем" գրքի, էջ 23)։

Ֆեյսալի դիկտատուրան հաստատելու պահից ի վեր անգլիական կառավարությունը մանրամասն պլան էր մշակել երկրի ազատագրական շարժումները ճնշելու համար։ 1922 թ. Կահիրեում, Անգլիայի գաղութների մինիստր Ու. Չերչիլի նախագահությամբ տեղի ունեցավ Իրաքում և Պաղեստինում գտնվող գերագույն կոմիսարների և Ադենի ու Բրիտանական Սոմալիի նահանգապետների կոնֆերանս, որտեղ ընդունվեց խնամակալ տերիտորիաները կառավարելու նոր պլան, որը ստացավ «վերահսկողություն առանց օկուպացիայի» անունը։ Այս պլանը հիմնված էր ավիացիոն և տեխնիկական զորքերը լայնորեն օգտագործելու վրա։ Ըստ այդ պլանի, Իրաքում նախատեսվում էր տեղավորել ութ ավիացիոն էսկադրիլիաներ, չորս հետիոտն դումարտակներ և այլն։ Նախկին մեծ բանակի փոխարեն ստեղծվում էին շարժուն զորքեր, որոնց հիմնական խնդիրն էր արագորեն ճնշել յուրաքանչյուր շարժում։ Սակայն միայն ուժով դժվար էր ճնշել, անվնաս դարձնել ազգային-ազատագրական շարժումները։ Այդ իսկ պատճառով Իրաքի միապետական կառավարությունը և անգլիական իմպերիալիստները դիմեցին նոր մանյովրի։ Այն ժամանակ, երբ Թուրքիան Մոսուլի համար աշխատում էր դրդել քրդերին Իրաքի և Անգլիայի դեմ, իսկ քրդական նոր շարժումների վտանգը առհասարակ վերացված չէր, Իրաքի կառավարությունը անգլիական կառավարության խորհրդով դիմեց որոշ «զիջումների»։ 1926 թ. Մոսուլի վիլայեթը Իրաքին վերջնականորեն միացնելուց հետո, Իրաքի կառավարության և անգլիացիների կողմից հրապարակված կոմյունիկեում ասվում էր, թե Մեծ Բրիտանիայի կառավարությունը և Իրաքի կառավարությունը ճանաչում են Իրաքի տերիտորիայում ապրող քրդերի իրավունքը այդ սահմաններում քրդական ավտոնոմիա ստեղծելու համար։

Իրաքի կառավարությունը հրատարակում է մի շարք դեկրետներ, որոնք հաստատում են քրդական ազգային փոքրամասնության իրավունքները, ինչպես նաև պարտավորություն է ստանձնում, որ «բնակիչների, ինչպես նաև այդ օկրուգների քաղաքացիական և կրոնական համայնքների իրավունքները կպաշտպանվեն անձեռնմխելիորեն»[37]։ Իրաքը պաշտոնապես սկսեց անվանվել «արաբների և քրդերի միացյալ Իրաքյան հաշիմիտյան թագավորություն». Իրաքի գերբի մեջ մտցվում են համապատասխան արաբական և քրդական էմբլեմաներ։

1926 թ. Իրաքի պրեմյեր-մինիստրը Իրաքի պառլամենտում հայտարարեց. «Մենք քրդերին տվել ենք բոլոր իրավունքները։ Աստիճանավորներ կնշանակվեն նրանցից։ Նրանց ազգային լեզուն դառնում է պաշտոնական լեզու։ Նրանց երեխաները դպրոցներում կսովորեն մայրենի լեզվով։ Մենք պարտավոր ենք ճանաչել քրդերի իրավունքները»։ Անգլիական և իրաքյան կառավարությունների խոստումները, սակայն, մնացին թղթի վրա։

1930 թ., երբ կնքվեց անգլո-իրաքյան նոր պայմանագիր, անգլիական կառավարության համաձայնությամբ Իրաքի կառավարությունը լիկվիդացնում է նույնիսկ այն խղճուկ իրավունքները, որից մինչ այդ օգտվում էին Իրաքի քրդերը։

Քրդական հասարակական կազմակերպությունների և քաղաքական գործիչների բողոքները՝ ուղղված Ազգերի Լիգային՝ իրենց իրավունքները ճանա-

---

37 «Революционный восток», № 9—10, 1930 г., стр. 287.

չելու մասին, մնացին անհետևանք։ Անգլիական կառավարության ներկայացուցիչ Քենեթեն Կորնովալիսը Իրաքի կառավարությանն ուղղված նոտայում այդ առթիվ գրում էր. «Դուք գիտեք, որ ազգային ավտոնոմիայի պահանջները, որոնք առաջ են քաշվել քրդերի կողմից, Ազգերի լիգայի կողմից մերժվեց Մեծ Բրիտանիայի Նորին Մեծության թագավորի կառավարության խորհրդով և հավանությամբ։

Ինչպես ես գիտեմ, Ազգերի լիգայի որոշումը մոտ ժամանակներս կհասցվի խնդրագրի հեղինակներին և Իրաքի կառավարությանը։ Ես խորհուրդ եմ տալիս Իրաքի մամուլին, չմեկնաբանել Ազգերի լիգայի որոշումը, որպեսզի քրդերի մեջ գրգռվածություն չառաջանա»։

1930 թ. ամռանը Քուրդիստանում, ի նշան բողոքի ընդդեմ կառավարության խստական քաղաքականության քրդերի նկատմամբ, իրաքյան Քուրդիստանի մի շարք շրջաններում ձեռնարկվեց պառլամենտական ընտրությունների բոյկոտը։ Որպես պատասխան քուրդ բնակչության դիմադրությանը, Իրաքի բանակը սկսեց գնդակոծել Սուլեյմանին։ Այս պրովոկացիոն գործողությունները առիթ հանդիսացան 1931 թ. Քուրդիստանում բռնկվող նոր ապստամբության համար։ Ապստամբության մասնակիցները պահանջում էին ազգային ինքնավարություն։ Ապստամբների զինված ուժերը հիմնականում կազմված էին Բարզանի շրջանի զինված ջոկատներից, նրանց հարում էին նաև Բարզինջանի, Սուլեյմանիի և այլ շրջանների քրդերը։ Իրաքի կառավարությունը իր զորքի ավելի քան 60 տոկոսը ուղարկում է ապստամբներին ճնշելու։ Չնայած Իրաքի կառավարության այն հայտարարությանը, թե ապստամբությունը ճընշելու համար հարկավոր է միայն զորքերի ոչ մեծ խումբ և երկու թնդանոթ, ապստամբները լուրջ հակահարված տվեցին կառավարական զորքերին։ Կառավարական զորքերից խլվեց հսկայական չափերով զինամթերք։ Այս զորամասին հաջողվեց խուսափել գլխովին ջախջախումից շնորհիվ անգլիական ավիացիայի, որը սկսեց անողոք գնդակոծման ենթարկել ապստամբության շրջանները։ Սպանվեցին մեծ թվով կանայք ու երեխաներ, ավերվեցին բազմաթիվ գյուղեր։

Խաղաղ բնակչության հետ տեսած արյունալի տեռորի հետ միասին, անգլիական զինված ուժերը գործադրեցին նաև պրոպագանդայի միջոցները։ Անգլիացիները հզոր բարձրախոսների միջոցով, որոնք հարմարեցված էին «Վիկտորիա» ինքնաթիռների վրա, քրդերեն լեզվով դիմում էին բնակչությանը, կոչ անելով հանձնվել առանց դիմադրության։

Կառավարությունը դեռևս չէր հասցրել ճնշել 1932 թ. ապստամբությունը, երբ սկսվեց 1933 թ. ապստամբությունը՝ նորից Բարզանիի շրջանում։ Այս ապստամբությունը լիկվիդացվեց ապստամբների ղեկավար շեյխ Մահմուդի և Իրաքյան կառավարության միջև տեղի ունեցած բանակցությունների շնորհիվ. այն բանից հետո, երբ այն բռնի կերպով ճնշելու բոլոր փորձերը վերջացան անհաջողությամբ։ Անգլիացիները շտապեցին ապստամբության ղեկավարներից ստորագրություն վերցնել այն մասին, որ նրանք Կիրկուկից և Սուլեյմանիից դուրս չեն գնա[38]։

38 Կիրկուկ և Սուլեյմանի քաղաքներում փաստորեն հսկողության տակ էին առնված քրդական այն գործիչները և ցեղապետերը, որոնք օպոզիցիոն տրամադրություն ունեին կառավարության նկատմամբ։ 1943 թ. Մուստաֆա բարզանին ի խախտումն այդ պայմանի, մեկնեց Բարզան և ղեկավարեց այնտեղ սկսվող ապստամբությունը։

Այսպիսով, անգլիական իմպերիալիզմի և Իրաքի թագավորական կառավարության հակաժողովրդական քաղաքականությունը, ինչպես Քուրդիստանի, նույնպես և Իրաքի մյուս շրջանների ժողովրդական մասսաներին հասցրել էին ծանր դրության և այդպիսի պայմաններում Իրաքի ներքաղաքական դրությունը չէր կարող ամուր լինել։ Իրենց հերթին երկրի ազատագրական ուժերի դեմ պայքարելու գործում Իրաքի ռեակցիոն կառավարությունները իրենց անգլիական տերերի հետ միասին կանգ չեն առել ոչ մի միջոցի առաջ։ Բավական է է նշել, որ Իրաքում 1935 թվականից մինչև 1954 թվականը տասնմեկ անգամ ռազմական դրություն է հայտարարվել, որն ընդհանուր առմամբ տևել է ավելի քան ինը տարի[39]։ Կառավարությունը կարող էր յուրաքանչյուր պահին ռազմական դրություն մտցնել առանց պառլամենտի հավանության։

Իրաքի պրոգրեսիվ հասարակական գործիչ Դաիբ Ֆարմանը իր «Իրաքը սև ռեակցիայի տարիներին» գրքի մեջ անգլիական իմպերիալիզմի տիրապետության և Իրաքի ծախված կառավարողների դաժան ռեժիմի մասին գրել է.

Օսմանյան կայսրությունից անջատված Իրաքը փաստորեն չունեցավ իր իսկական անկախությունը, նա մնաց որպես անգլիական իմպերիալիզմի կիսագաղութ, իսկ նրա կառավարողները որպես անգլիական կառավարության հլու կամակատարներ։ Այստեղից հասկանալի է դառնում, թե ինչու քրդական ազգային-ազատագրական շարժումները Իրաքում մշտապես հակադրվել են անգլիական իմպերիալիզմի շահերին, թե ինչու անգլիական իմպերիալիստները, իսկ հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նաև ամերիկյան իմպերիալիստները, հատուկ հետաքրքրություն են հանդես բերել «քրդական հարցի» նկատմամբ, կանգ չառնելով նույնիսկ քրդերին «անկախ պետականություն ստեղծելու հնարավորություն տալու» խոստումների առաջ։

Սակայն Իրաքի քրդերի պայքարը գնալով լայն թափ էր ստանում և այն սերտորեն կապված էր արաբ աշխատավորության ազատագրական պայքարի հետ։ Իրաքի արաբ և քուրդ աշխատավորության պայքարը 1958 թ. հուլիսի 14-ին հասցրեց Նուրի Սայիդ-Ֆեյսալի հակաժողովրդական ռեժիմի տապալմանը. Իրաքը հայտարարվեց ռեսպուբլիկա, որտեղ քրդերը, ըստ կառավարության հայտարարության, ստանում էին արաբներին համահավասար իրավունքներ։ Հուլիսի 14-ի ռևոլյուցիայից հետո ընկած ժամանակաշրջանը, սակայն, ցույց է տալիս, որ Կասրմի կառավարությունը փաստորեն ետ է կանգնում իր տված խոստումներից։ Երկրի չլուծված պրոբլեմներից մեկն էլ հանդիսանում է քրդական հարցը։ «Իրաքում,—գրում է Մուհամեդ Սալիմը,—հիմնականում կառավարում է արաբական բուրժուազիան, չնայած Կասրմի կառավարության կազմի մեջ մտնում են քրդական ազգության մի քանի մինիստրներ։ Կառավարությունը չի ճանաչում քուրդ ժողովրդի ինքնորոշման իրավունքը և հրահրում է ազգային կոնֆլիկտներ»[40]։

Այժմ քրդական ազատագրական շարժման բնորոշ գծերից մեկը հանդիսանում է սերտ միասնությունը արաբ աշխատավորության մղած պայքարի հետ. այդ միասնության հիմնական կազմակերպող և ոգեշնչող ուժը հանդիսանում է Իրաքի Կոմունիստական պարտիան։

---

39 «Революция в Ираке», М., 1958, стр. 16.

40 Мухамед Салим, После трех лет иракской революции. (Տե՛ս «Проблемы мира и социализма», 1961, № 10, стр. 42).